

չապիւն որմէ մաքրուիլ կը ցանկային հին հայք, որով անշուշտ մաքրել ալ կը ցանկային նաեւ մեր գեղարուեստի այն մասերը որ եկեղեցւոյն կը ծառայէին: Իսկ գորգերու արուեստին նման աշխարհական արուեստներ կը մնային թիւնիք վիշապիւն թաթխուած: Այսպէս այդ արուեստը գրեթէ բոլորովին կը տարբերէր միւս Հայ արուեստներէն. այնու հանդերձ աւելցնեմ որ կայ կապակցութիւն մը այնքան խորունկ որ դժուար թէ որ և է մէկը հարեանցի ակնարկով մը (որպէս Mr. Pope) կարելիութիւնը ունենայ նշմարել ու տեսցընել զայն:

Նոյն Ամերիկացի հեղինակը դարձեալ հապճեպով կը փաստէ թէ «կամաց, բազմաշխատ և դժուար գեղարուեստ մը՝ ինչպէս է գորգաշինութիւնը՝ կրնար զարգանալ Հայաստանի մէջ, առանց ցոյց տալու կապակցութիւն ժամանակակից միացեալ գեղարուեստներուն, դժուար է հաւատալ»<sup>1</sup>: Կապակցութեան խնդիրը բացատրեցի, իսկ կամաց, բազմաշխատ գեղարուեստներով միայն և միայն զբաղած են Հայք, վկայ իրենց համբար հիւսուածեղէն գործերուն մէջ, ոսկերչութեան, պղնձագործութեան դժուար արուեստներուն մէջ, քանդակագործութեան յոգնեցուցիչ աշխատութեանց մէջ, բայց մանաւանդ ձեռագիր գրելու, ծաղիկու չարչարայից, ապիրախտ արուեստներուն և աշխատութեանց մէջ: Առ նուազն 20,000 հին հայ ձեռագիրներ հասած են մեզի, այն ալ բազմապատիկ կորուստներ տալէ վերջ, մեր թուական համեմատութեան համաձայն եղած անհամեմատ խոշոր այս արտադրութիւնը անհամապատասխան է որ և է ուրիշ երկրի արտադրութեանց հետ, և մեզի համար ամենապատուաւորը: Գորգերուն զծագրածեւերը պահեցին իրենց աւանդական ծագումը և ձեւերը, եկեղեցիէն անկախ այս արուեստ-արհեստին մէջ: Այս նոյն կասկածները կը տածեմ նաեւ, առանց ունենալու գորգերուն համար ունեցած կարկառուն փաստերը, հայկական միւս հիւսուածեղէններուն համար,

որոնցմէ՝ գորգերէն՝ մեր օրերուն հասած հին նմոշներուն նման նմոշներ չեն հասած, կամ եթէ հասած ալ են՝ անոնց անձանօթ կը մնանք դժբախտաբար:

Քրիստոնէութիւնը ինչպէս տեսանք ամէն կերպով ջնջել անհետացնել ուզեց վիշապը, որուն համար ըսի նախապէս թէ «հին Հայ գորգաշէնին կը հայթայթէր գծածեւի առատ նիւթ և աղբւր, անոր երեւակայութեան անկապտող հանգամանքով, կը խորհրդանշէր խեթ, բարաքիւտ, բարութիւն, առատութիւն, շէնութիւն. և ինչպէս որ ցոյց պիտի տամ, գորգը իր վիշապով նոյն իսկ օգնական սեպուեցաւ մայրութեան, տղաբերքի, ամուսնեան»: Վիշապին արժանիքները ըլլալով այդ ամէնը անտարակոյս իր պատկերը կրող գորգն ալ կը վայելէր այդ բարի համբաւները: Վիշապ զծագրութեամբ գորգն ալ կ'ըլլար սուրբ, ազդեցիկ խորհրդանշան մը իր պաշտամանց յատուկ ուղղութեամբ, ինչպէս որ Յիսուսի խաչելութեամբ խաչը եղաւ յոյսի, փրկութեան, ապաւէն, նշան: Եւ ասիկա բացարձակօրէն պարզող անտարակուսելի ապացոյց մըն է հետեւեալ աղաւաղեալ քիչ մը աւանդական հին սովորութիւնը որ Հայութեան վերջին ամբողջութիւններէն եղող Ղարաբաղի Հայոց մէջ դեռ գոյութիւն ունէր:

«Ղարաբաղի գիւղերում և թէ Շուշի քաղաքում սովորութիւն կար և այժմ էլ ընդհանրացած է...: Երբ վերջացնում են գործուածքը (գորգին) և մնում է մօտ մի արշին չգործած աւելի տեղ, խնձոյք են կազմում, հարեւաններին ու բարեկամներին կանչում գորգը կտրելու օր»:

«Չրեքք, ամուլի կամ յղի կանայք այդ օրը գալիս են իրենց բախտը փորձելու, տղայ կամ աղջիկ կ'ունենան թէ ոչ, դրա համար ոստայնի վրայ չգործուած թելերի մէջտեղից կտրում, ծակ են բաց անում. ամուլի կիներ անց է կենում երեք անգամ այդ ծակով և ոստայնի տակ ոտները մեկ-

1. «Հայկական Վիշապ Գորգերու Առասպելը» թրգմ. անգլ. իմս, «Բազմավէպ» 1930. Թիւ 10: